ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«26» 11 2024 թ.
№ ԳԱՊՁԲ-1716

«ՉԻՆԱՐ-ԹԵՔ» ՍՊԸ» ՍՊԸ (ՀՎՀՀ 02698053)
ՀՀ, ք. Երևան, Ռաֆֆու փողոց 111
Հեռ. 098-32-40-59
էլ. փոստի հասցե՝ mihran@chinar.tech

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՉԻՆԱՐ-ԹԵՔ» ՍՊ ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) միջև 24.06.2024թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-24-24-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերությունը Պայմանագիրը կնքելուց հետո 60 օրյա ժամկետում պետք է մատակարարեր 100 լրակազմ ապրանք, որը վերջինս չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2024թ. նոյեմբերի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՉԻՆԱՐ-ԹԵՔ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1,548,250 ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և 7,741,250 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն: Տույժերն ու տուգանքները հաշվարկված են 2024թ. նոյեմբերի 1-ի դրությամբ:

Տեղեկացնում եմ նաև, որ հաշվարկված տույժի ու տուգանքի գումարերը Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am